

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4/14

33.6.2
2-94

1931

336.2

2-94

30 NOV 2009
15 JAN 2010

Գրականորեն բոլոր յեղևները, միացեք.

Հաստատում եմ:

Ֆինտոզիովի անդակալ՝

Ա. Պետրոսյան

30 ապր. 1931 թ.

Հ Ր Ա Յ Ա Ն Գ

1931 թ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ
ՅԵՆՔԱԿԱ ԿՈՒԼԱԿԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՅՅՈՒՆՆԵՐԸ
ԸՆՏՐԵԼՈՒ (ՋՈՂԵԼՈՒ) ՅԵՎ ՑՈՒՑԱԿԱԳՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

2001

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԵՀ ՖԻՆՏՈՂԿՈՄՍԻ

ՅԵՐԵՎԱՆ—1931

14 JUN 2013

27689

41491-ահ

336.2

2-94

W

պ

1. ԿՈՒԼԱԿԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

149
12647-60

§ 1. Անհատական կարգով գյուղհարկի յեթարկելու համար պետք է հաշվի առնել հետևյալ կարգի արևտեսությունները՝

ա) յեթև անտեսության անդամներն զբաղվում են գնումներով՝ ծախելու (վաճառելու) նպատակով:

Ծանոթություն.— Գնում և վաճառք ասելով պետք է հասկանալ հետևյալը՝ յեթև անտեսությունը գյուղում կամ քաղաքում ծախելու համար գնում է զանազան գյուղատնտեսական մթերքներ, որինակ՝ անասուններ, թռչուններ, յուղ, ցորեն և այլն:


բ) յեթև անտեսության անդամները զբաղվում են առևտրով:

Ծանոթություն.— Առևտուր ասելով պետք է հասկանալ հետևյալը՝ յեթև անտեսության անդամը գյուղում կամ քաղաքում խանութ տնի կամ քաղաքից դնելով արդյունաբերության մթերքներ վաճառում է գյուղում կամ փոխանակում և գյուղատնտեսական մթերքների հետ նորից վաճառելու նպատակով:

գ) Յեթև անտեսության անդամներն զբաղվում են վաչխատեսությամբ:

Ծանոթություն.— Վաչխատեսության ասելով պետք է հասկանալ հետևյալը՝ յեթև անտեսությունն որինական տակոսից բարձր զբաղում կամ գյուղատնտեսական մթերքներ և առլիս ինչպես ցորեն, գարի և այլն:

ՊԵՏՏՐՈՍԻ ՏՄԱՐԱԼ
ԳՐԱՌԵՊ. 6393 (Բ)
ՊԱՏՎԵՐ 2727
ՏԻՐԱԹ 2000



12647-57

§ 2. Գնում և վաճառք չի կալ .դ համարվել՝

ա) յեթե անտեսությունը վաճառում և իր անա-
տեսները և նրանց փոխարեն զնում նոր անասուններ՝
հոար լավացնելու և ավերացնելու նպատակով .

բ) յեթե անտեսությունը վաճառում և իր դյուզա-
անտեսական մթերքները .

Որինակ՝ մի վորեն անտեսության անդամները
մեկը քաղաքում վաճառել և իր դյուզատնտեսական
մթերքները և իր անտեսության կարիքները համար գր-
նել և աղ, նավթ, ճոթեղեն և այլն .

դ) յեթե անտեսության անդամները սարապում են
դյուզատնտեսական մթերքների և անպետք նյութերի
(отбросы) զնումներով, կիրատելով հետևյալ բոլոր
պայմանները՝

1. Առանց վարձու աշխատանքի .

2. Միայն պետական և կոոպերատիվ հիմնարկու-
թյունների համար, նրանց հանձնարարությամբ, հա-
մաձայն պայմանագրի :

3. Վերջված դներով (лимитным ценам).

4. Կամ փոխանակում և ապրանքով, յեթե վերջինը
ստացված և հիմնարկությունից փոխանակության հա-
մար :

§ 3. Անհատական կարգով հարկելու համար պետք
և հաշվի առնել նույնպես այն անտեսությունները, վո-
րոնք ունեն հետեվյալ հատկանիշները՝

ա) յեթե անտեսությունը սխառեմատիկորեն դուր-
ծաղրում և վարձու աշխատանք դյուզատնտեսության
մեջ կամ արհեստագործական և տնայնագործական ձեռ-
նարկություններում :

Գանորություն. — Սխառեմատիկ վարձու աշխատանքով ոգտվող
չեն համարվում հետեվյալ անտեսությունները՝

1. Յեթե հողահատկագործական անտեսություն-
ները բոլոր շրջաններում ոգտվում են վոչ ավելի, քան
50 վարձու բանվորական սրից :

2. Յեթե խաղողագործական անտեսությունները
բոլոր շրջաններում ոգտվում են վոչ ավելի, քան 100
վարձու բանվորական սրից :

3. Յեթե այրեղործական (ստղատու) անտեսու-
թյունները բոլոր շրջաններում ոգտվում են վոչ ավելի,
քան 75 վարձու բանվորական սրից :

4. Յեթե բամբակագործական անտեսությունները
բոլոր շրջաններում ոգտվում են վոչ ավելի, քան 150
վարձու բանվորական սրից :

5. Յեթե ծխախոտագործական անտեսությունները
բոլոր շրջաններում ոգտվում են վոչ ավելի, քան 200
վարձու բանվորական սրից .

6. Յեթե չարթուկագործական անտեսությունները
վոչ-բամբակացան շրջաններում ոգտվում են վոչ ավելի
քան 50 վարձու բանվորական սրից .

7. Յեթե անասնապահական անտեսությունները բո-
լոր շրջաններում աշխատեցնում են մեկ հովիվ կամ հո-
տաղ .

Հոտաղ ասելով պետք և հասկանալ հորթարածնե-
րին և դռնարածներին մինչև 16 տարեկան հասակը :

8. Յեթե անտեսությունն աշխատեցնում և արհես-
տի մեջ մեկ մշտական վարձու բանվորից վոչ ավելի
կամ յերկու անչափահաս աշակերտից վոչ ավելի ար-
հեստի առանձնահատուկ պայմանները ստիպված, որի-
նակ՝ յեթե անտեսությունն ունի դարբնոց և աշխա-
տեցնում և մեկ մշտական բանվոր .

9. Յեթե վորերի, այրիների, հալմանդամների և
սովորողների անտեսություններում, չկան աշխատու-
նակ տղամարդիկ, (կամ թե նրանց աշխատունակ տղա-

մարդիկ ծանր հիվանդ են, գտնվում են Կարմիր բանակում, հանքադործներ են, կամ բացակայում են տնտեսություններից դրաի շինարարական աշխատանքների վրա աշխատելու համար) և դրա հետևանքով աշխատեցնում են մեկ մշտական ու սահմանված թվով սեզոնային բանվորներից վոչ ավելի կամ աշխատեցնում են միայն սեզոնային բանվորներ սահմանափակ թվից մեր, բայց մեկ մշտական բանվորի վարձու որերից վոչ ավելի չափով:

10. յեթե տնտեսությունը ունի խառն մշակույթի բնույթ և ոգտվում է վոչ ավելի քան սահմանված ե այն մշակույթի համար, վորը կազմում է տնտեսության հիմնական գյուղատնտեսություն ճյուղը:

Որինակ՝ տնտեսությունը ունի մեկ դեռ. ցանք, մեկ դեռ. խաղողի այգի, յերկու կով, յերեք վոչխար: Վորովհետեւ տնտեսության հիմնական գյուղատնտեսություն ճյուղը կազմում է խաղողագործությունը, որեմն իրավունք ունի վարձելու խաղողագործական տրնտեսությունների համար սահմանված 100 վարձու բանվորական որից վոչ ավելի:

11. Յեթե անասնապահական տնտեսությունը ունի մեկ մշտական հովիվ կամ հոտաղ և միաժամանակ ոգտվում է վոչ ավելի, քան 35 վարձու բանվորական որից:

Ծանոթություն.— Յեթե անասնապահական տնտեսությունը ունի 1 մշտական հովիվ կամ հոտաղ և միաժամանակ ոգտվում է 35 կամ ավելի վարձու բանվորական որից, ապա այդ հանգամանքը հիմք է ծառայում տնտեսությունը անասնապահական կարգով հարկելու համար:

Ծանոթություն.— 2. Յեթե անասնապահական տնտեսությունը վարձում է մեկ մշտական հովիվ կամ հոտաղ, բայց ոգտադործում է նրան վորպես բտորակ գյուղատնտեսության որիչ աշխատանքների համար, ապա այդ հանգամանքը հիմք է ծառայում տնտեսությունը անասնապահական կարգով հարկելու:

Ծանոթություն.— 3. Յեթե անասնապահական տնտեսությունը վարձում է մեկ մշտական հովիվ կամ հոտաղ և իրեն անասունների հետ միասին վարձած հովիվի կամ հոտաղի միջոցով պահում է որիչ տնտեսությունների անասուններ և ինքը ոգտվում է ստացած արդյունքից, ապա այդ հանգամանքը հիմք է ծառայում տնտեսությունը անասնապահական կարգով հարկելու համար:

բ) յեթե տնտեսությունն ունի աղաց, ձիթհան, գինդ, նորմայով աշխատող ողու գործարան, կորեկաղաց և գզրան, կարտոֆիլի, պտուղների, բանջարեղենի, բոժոժի կամ ծխախոտի չորանոց կամ այլ արդյունարերական ձեռնարկություն՝ այն դեպքում, յերբ այդ ձեռնարկություններում գործադրվում են մեքենայական շարժիչ: Յեթե տնտեսության մեջ կա այնպիսի ձեռնարկություն, վորը գործադրում է քամու և ջրի ուժ այն դեպքում, յերբ այդ ձեռնարկության տարեկան յեկամուտը 125 ո. ավելի յե, իսկ ջրաղացի յեկամուտը 150 ուրբուց ավելի:

Ծանոթություն.— 1. Այն դեպքերում, յերբ քամու կամ ջրի ուժով աշխատող ձեռնարկությունները պատկանում են մի քանի տնտեսությունների, որիչ հատկանիշների բացակայության դեպքում, անասնապահական կարգով հարկվում են այն տնտեսությունները, վորոնք իրենց պատկանող ձեռնարկության մասից ստանում են տարեկան 125 ուրբուց ավելի յեկամուտ, իսկ ջրաղացից 150 ո. ավելի:

Ծանոթություն.— 2. Այն դեպքերում, յերբ քամու կամ ջրի ուժով աշխատող ձեռնարկությունները պատկանում են մի քանի տնտեսությունների և դրանց շահագործումը կատարվում է ամեն տարի մի տնտեսության կողմից, ըստ հերթի, անասնապահական կարգով հարկվում են այն տնտեսությունները, վորոնք շահագործում են ձեռնարկությունը 1930 թվին կամ այդ տարվա մեծ մասի ընթացքում և ստա-

ցել են 125 ո. ավելի յեկամուտ, իսկ ջրաղացից 150 ո. ավելի յեկամուտ:

Ծանոթութիւն.— 3. Նորմայով աշխատող ողու զործարանները հատկանիչ յեն ծառայում անտեսութեանը անհատական կարգով հարկելու համար, յեթե նրանց տերերը սպիրտ կամ ողի թորելու և վաճառելու նպատակով հում նյութ են դրնում, անկախ նրանից, դործադրվում են մեքենայական շարժիչ, կամ ջրի ուժ թե վոչ, յեթե տարեկան յեկամուտը 125 ո. ավելի յե:

դ) յեթե անտեսութեանը սխտեմատիկաբար վարձով և տալիս բարդ գյուղատնտեսական մեքենաներ կամ վարձով աշխատեցնում և այդ մեքենաներն ուրիշ տընտեսութեաների համար անկախ յեկամարի դումարից:

դ) յեթե անտեսութեանն ունի արդյունաբերական այնպիսի ձեռնարկութեան, վորի միջոցով շահագործում և շրջակա բնակչութեանը, աշխատանքները հանձնարարելով աներում կատարելու համար, կամ յեթե անտեսութեանը վարձով և տալիս արդյունաբերական և առևտրական շահագործման համար այնպիսի ձեռնարկութեաններ, վորոնց առկայութեանը տընտեսութեան մեջ հատկանիչ և անհատական կարգով հարկելու համար:

Որինակ՝ մի անտեսութեան կապարով ավել և իրեն պատկանող ջրաղացը մի ուրիշ անտեսութեան և դրա համար բաժնուժ և բաժնեթիւ 300 ուրլի գրամ կամ 80 փութ ցորեն:

Վորովհետև այդպիսի ջրաղացի առկայութեանը անտեսութեան մեջ հատկանիչ և ծառայում անհատական կարգով հարկելու համար, ուրեմն և ջրաղացատերը, վոր վարձով և ավել ջրաղացը և կապարուուն, վոր վարձել և այդ, պետք և հարկվեն անհատական կարգով:

ե) յեթե անտեսութեանը, կըճատելով իր ցանքի տարածութեանը, սխտեմատիկաբար վարձով և տալիս սեփական կենդանի քաչող ուժը ուրիշ անտեսութեաններին այն դեպքում, յերբ տարեկան այդ յեկամուտը 125 ո. ավելի յե:

զ) յեթե անտեսութեանը կապարի կամ կիտրարի անվան տակ հող և վարձով վերցնում՝ տվողի համար ստրկացուցիչ պայմաններով:

Որինակ՝ մի անտեսութեան վերցրել և կիտրարի անվան տակ մի չքավորի հող այն պայմանով, վոր ինքը միայն վարն անի և սերմի կետը տա, իսկ մնացած բոլոր աշխատանքները պարտավոր և կատարելու հող տվող չքավոր անտեսութեանը: Գրա հետ միասին բերքի յերեք քառորդ մասը պետք և վերցնի հողը կիտրարի անվան տակ վերցնող անտեսութեանը:

Այդպիսի անտեսութեանը պետք և հարկվի անհատական կարգով, վորովհետև հողի վարձակալութեան պայմանները ստրկացուցիչ են տվողի համար:

ը) յեթե անտեսութեանն արդյունաբերական և առևտրական շահագործման նպատակներով վերցնում և կապարով պողատու կամ խաղողի այգիներ և բանջարանոցներ կամ վորեկ այնպիսի ձեռնարկութեան, վորի առկայութեանը, բնդհանրապես, անտեսութեան մեջ հատկանիչ և անհատական կարգով հարկելու համար:

Ծանոթութիւն.— 1. Այգիները և հողի վարձակալութեան, բովորական կամ արդյունաբերական շահագործման ընդթիւ ու նպատակը վորոչում են չբնանային հարկային հանձնատողպիները:

Ծանոթութիւն.— 2. Վարձակալած այգին չի կարող հատկանիչ լինել անտեսութեանն անհատական կարգով հարկելու համար, յեթե տարածութեանը կես դեյատիւնից յախաս և:

Թ) յեթե տնտեսությունը վարձով և տալիս սարքավորված առանձին շենքեր բնակութեան կամ ձեռնարկութեան համար այն դեպքում, յերբ այդ շենքերից ստացած տարեկան յեկամտի գումարը բոլոր վայրերում բայց ամառանոցային, 200 ուրբուց ավելի յե: Ամառանոցային վայրերում տնտեսությունները համարվում են կուլակային և հարկվում են անհատական կարգով, յեթե ընդհանուր յեկամուտը 500 ո. ավելի յե, իսկ այդ շենքերը վարձով տալուց ստացած յեկամուտը 300 ո. ավելի:

Ծանոթություն.— 1. Յեթե տնտեսությունը ամառանոցային վայրերում ամառվա ամիսներին վարձով և տալիս իր բնակարանը՝ ձմեռը նորից այդ շենքում ապրելու համար, անկախ տնտեսութեան յեկամտից, անհատական կարգով հարկման էնթակա չէ:

Ծանոթություն.— 2. Ամառանոցային վայրեր են համարվում Գլխանը, Ստեփանավանը, Ծաղկածորը, Գորիսը, Նոր-Բայազետը, Յեկենայիան, Ախտան և Ալիբուշաիը:

Ծանոթություն.— 3. Չի թույլատրվում անհատական կարգով հաշիւ այն բանվորներին ու ծառայողներին, վորոնց հիմնական գրադժուները աշխատանքն և կամ վարձու ծառայութեանը, և վորբան միաժամանակ ունեն վորք գյուղատնտեսութեան, վորպես յեկամտի սժանդակ աղբյուր, նաև սեկական շենքեր, վորոնց շահագործում են վարձով տալու միջոցով:

Այդ բանվորներն ու ծառայողները հարկվում են ընդհանուր կարգով, վորպես աշխատավորական գյուղացիական տնտեսություններ:

Սակայն այն դեպքերում, յերբ նման տնտեսութեաններն ունեն գյուղատնտեսութեանն, և շենքերը վարձով տալուց ստացած յեկամուտներն, յեկամտահար

կի համար սահմանված չհարկվող միլիոններից բարձր և, վորի հետևանքով նրանք զրկվում են խորհուրդների ընտրութեաններին մասնակցելու իրավունքից, պետք է հարկվեն անհատական կարգով մյուս տնտեսութեանների համար սահմանված կարգով:

Ի) յեթե տնտեսութեան անդամները պարագայում են առևտրով, վաշխատութեամբ, կամ ունեն այլ՝ վաշխատավորական յեկամուտներ, նույն թվում նաև կրոնական պաշտամունքի ծառայողները՝ անկախ այդ աղբյուրներից ստացած յեկամտի գումարից:

§ 4. Անհատական կարգով չեն կարող հարկվել այն տնտեսութեանները, վորոնք ունեն վերև հիշված հատկանիշները, բայց գյուղատնտեսութեամբ չեն պարսպում:

Ծանոթություն.— Գյուղատնտեսութեամբ պարսպող չեն կարող համարվել՝

1. Հողաբաժին չունեցող այն տնտեսութեանները, վորոնց գյուղատնտեսական, նորմատիվ ձեվով հաշված յեկամուտը 30 ո. ավելի չէ, նույն թվում հաշվելով նաև արտոնութեաններ կարգով ազատվող յեկամտի աղբյուրները:

Որինակ՝ հողաբաժին չունեցող տնտեսութեանն ունի վերև հիշված հատկանիշներից վորեւ մեկը և ունի հետևյալ գյուղատնտեսական յեկամտի աղբյուրները՝ 1 կով, 2 խոզ, և 3 վոչխոր: Յենթադրենք, տվյալ գյուղի համար սահմանված է՝ կովի նորման 10 ո., խոզի նորման 5 ո., վաշխարների նորման 3 ո.: Այդ տնտեսութեան յեկամուտը վորպէիս խոզերը ևս պետք է հաշվել և այդպիսով կովի, վոչխորների և խոզերի յեկամուտը կլինի 20 ուրբի:

2. Հողաբաժին չունեցող այն տնտեսութեանները, վորոնք ունեն 1 զլուխ խոչոր հարկվող անտառն, յեթե նույնիսկ

այդ անտեսել նորման տվյալ դուրսում սահմանված է 30 ուրբուց ավելի :

Գյուղհարկային հանձնաժողովներն իրավունք ունեն անանց ձեռնարկ հարկել անհատական կարգով նաև այնպիսի անտեսություններ, վերոնք ունեն վերև հիշված հատկանիշները, բայց հողարածին չունեն և գյուղատնտեսական յեկամությունը 30 ուրբուց ավելի :

§ 5. Այս հրահանգում մատնանշված հատկանիշները հիմք են ծառայում անհատական կարգով հարկելու համար այն դեպքում, յեթե այդ հատկանիշները գոյություն են ունեցել անտեսության մեջ 1930 թ. հունվարից մինչև 1930 թ. դեկտեմբերը, կամ գոյություն ունեն հաշվառման ժամանակ: Հակառակ դեպքում, այսինքն՝ յեթե հատկանիշները գոյություն են ունեցել մինչև 1930 թ. հունվարը. նման անտեսություններն անհատական կարգով հարկվել չեն կարող:

§ 6. Եթե անտեսությունը՝ 1930 թ. հունվարից սկսած մինչև 1930 թ. դեկտեմբերն ունեցել է այս հրահանգում մատնանշված հատկանիշները, իսկ հաշվառման ժամանակ այդ հատկանիշները գոյություն չունեն՝ այդ անտեսությունները պետք է հարկվեն անհատական կարգով:

Ծանոթություն.— Երջանային հարկահանձնաժողովները իրավունք ունեն այդպիսի անտեսություններին անհատական կարգով հարկել, նկատել ունենալով թե անտեսությունը յերբ և յրիվել այդ հատկանիշները, ինչ որստճառներով և այդ հատկանիշների բնույթը: Իսկ յեթե նման անտեսությունները նորից ձևք կրերեն այդ հատկանիշները, այդ հարկային տարվա ընթացքում նրանք կարող են յեթարկվել հարկման անհատական կարգով:

2. ՆԱԽԱՊԵՍ ԻՆՉ ՁԵՎՈՎ ՊԵՏՔ Ե ԸՆՏՐԵԼ (ՉՈԿԵԼ) ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՀԱՐԿՎՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 7. Անհատական կարգով հարկվող անտեսությունները պետք է ընտրեն (չոկեն) և նրանց նախնական ցուցակ կազմեն գյուղխորհուրդները գյուղհաշվառու հանձնաժողովների հետ, մինչև ընդհանուր հաշվառումը: Այս ընտրություն պետք է անդրայման ակտով մասնակցեն գյուղի չքավորները, բատրակները, կոլխոզնիկները և միջակները ակտիվը:

§ 8. Յուրաքանչյուր ժամանակ պետք է ուղտագործել՝ 1) անցյալ տարի փաստորեն անհատական կարգով հարկված անտեսությունների ցուցակը, 2) բոլոր ատեարականների վերաբերյալ չըջհարկային սեպտյան կազմած ցուցակը, 3) ընտրական իրավունքից զրկված անտեսությունների վերաբերյալ կազմած ցուցակը և այլն:

§ 9. Մինչև ցուցակ կազմելը հանձնաժողովը պարտավոր է կատարել մանրամասն քննություն, վորի ժամանակ պետք է ներկա լինեն այն հարկատուները, վորոնց անտեսությունները յեթակա յեն հարկման անհատական կարգով:

§ 10. Գյուղհարկային հանձնաժողովները, հիմք ընդունելով այդ անտեսությունների վերաբերյալ բայց նյութերը և ցուցմունքները, պետք է հայտնաբերեն թե ինչ հատկանիշներ է ունեցել անցյալ տարի, ինչ հատկանիշ ունի այս տարի և այդ հատկանիշների համաձայն վորոշում են՝ պետք է արդյոք տվյալ անտես-

սուբյանն այս տարի ևս անհատական կարգով հարկել, թե վոչ:

§ 11. Յեթե քննությունից պարզվի, վոք այս կամ այն անտեսությունն այս տարի ևս պետք է անհատական կարգով հարկվի, ապա ցուցակագրում են նրան, իսկ յեթե պարզվի, վոք չսխառք է հարկվի՝ չեն ցուցակագրում:

§ 12. Յեթե քննությունից պարզվի, վոք անտեսությունն անցյալ տարի ունեցել է այնպիսի հատկանիշ, վորն այս տարի ևս հիմք է ծառայում անհատական կարգով հարկելու համար, բայց վորից նա զբրկվել է մինչև 1930 թ. հունվար ամիսը և մինչև հիմա ձեռք չի բերել այդ հատկանիշն ու բացի դրանից, ուրիշ վոչ մի հատկանիշ չունի, ուրեմն այդ անտեսությանը չպետք է ցուցակագրել:

Որինակ՝ յենթադրենք մի անտեսություն պարապել է անցյալ տարի առևտրով և ուրիշ հատկանիշ չի ունեցել: Այս տարի սկսած 1930 թ. հարկից մինչև հիմա նա այլևս առևտրով չի պարապում և ուրիշ վոչ մի հատկանիշ չունի, այդ անտեսությունը չպետք է ցուցակագրել:

§ 13. Յեթե քննությունից պարզվի, վոք անտեսությունն ունեցել է անցյալ տարի (սկսած 1929 թ. հունվարից մինչև 1929 թ. դեկտեմբերը) և ունի այս տարի (սկսած 1930 թ. հունվարից մինչև հիմա) այնպիսի հատկանիշ, վորը հիմք է ծառայում անհատական կարգով հարկելու համար, դրան ևս պետք է ցուցակագրել:

Որինակ՝ յենթադրենք անտեսությունն անցյալ տարի ունեցել է ջրաղաց և այս տարի ևս ունի այդ ջրաղացը:

§ 14. Յեթե 1930 թ. հունվարից հետո ունեցած հատկանիշների պատճառով 1931 թ. հարկային տարում անտեսությունը մեկ անգամ արդեն հարկվել է անհատական կարգով ապա 1931 թ. հարկային տարում ևս նույն այդ հատկանիշների համար անտեսությունը կրկին անգամ կարող է հարկվել անհատական կարգով:

§ 15. Յեթե 1930 թ. հունվարից հետո ունեցած հատկանիշների պատճառով 1930—31 հարկային տարում անտեսությունն արդեն հարկվել է անհատական կարգով կամ ապակուրակացման յենթարկվել, նման անտեսությանը 1931 հարկային տարում անհատական կարգով չի կարելի հարկել, յեթե միայն անհատական կարգով հարկելու նրա հատկանիշն այլևս դոյություն չունի կամ թաղցրած դրամադրուխ, յեկամուտներ և դույք չունեն, հակառակ դեպքում, այսինքն՝ յեթե հատկանիշ ունի, կամ ունի թագցրած դրամադրուխ, յեկամուտներ և դույք ապա հարկվում է ընդհանուր հիմունքներով՝ ամհատական կարգով:

§ 16. Բոլոր այն անտեսությունների նկատմամբ, վորոնք անցյալ տարի սխալմամբ կամ հատկանիշ չունենալու պատճառով, անհատական կարգով չեն հարկվել, իսկ այս տարի ունեցած հատկանիշների համաձայն պետք է հարկվեն՝ հանձնաժողովը հրավիրում է նրանց ներկայացուցիչներին ևս և քննությունից հետո վորոչում՝ պետք է հարկել անհատական կարգով, թե վոչ:

Որինակ 1՝ին.— Յենթադրենք անցյալ տարի մի վորե է աշխատավորական անտեսություն վոչ մի հատկանիշ չի ունեցել անհատական կարգով հարկելու համար, իսկ այս տարի— (1930 թ. հունվարից կամ հետո) նա սկսել է սխալաբար առևտրով, այդ անտեսու-

թյունն այս տարի պետք է հարկվի անհատական կարգով:

Որինակ 2-րդ. — Յենթադրենք անցյալ տարի մի վորեկե աշխատավորական անտեսություն վոչ մի հատկանիչ չի ունեցել անհատական կարգով հարկելու համար, իսկ այս տարի ձեռք է բերել ջրաղաց: Վորովհետև այդ անտեսությունն ունի ջրաղաց, ուրեմն պետք է հարկվի անհատական կարգով, յեթե այդ ջրաղացի շահագործումից նա ստանում է տարեկան 150 ո. վոչ պակաս յեկամուտ:

Որինակ 3-րդ. — Մի անտեսություն անցյալ տարի յեղել է կրոնական պաշտամունքի սպասավոր և ոտացել է գյուղատնտեսությունից յեկամուտ 300 ո. և սխարմամբ չի հարկվել անհատական կարգով: Այս տարի նա շարունակում է իր արհեստը և պարսպում է գյուղատնտեսությամբ, ուրեմն այս անտեսությունը պետք է հարկվի անհատական կարգով, անկախ կրոնական պաշտամունքի ծառայությունից ստացած յեկամտի դոմարից:

§ 17. Յեթե քննությունից պարզվի, վոր անտեսությունն ունի այնպիսի հատկանիչ, վորն անցյալ տարի հիմք չէր ծառայում անհատական կարգով հարկելու համար, իսկ այս տարի հիմք է, ուրեմն դրան ևս պետք է ցուցակագրել անհատական կարգով հարկելու համար:

Որինակ՝ մի անտեսություն կրճատելով իր ցանքի տարածությունը սխտեմատիկորեն վարձով է ավելի իր կենդանի քաչող ուժն ուրիշ անտեսությունների և ստացել է դրանից մեկ տարվա ընթացքում 125 ո. յեկամուտ:

Այդպիսի անտեսությունն այս տարի պետք է հարկվի անհատական կարգով, վորովհետև այդ հանգամանքն

այս տարի հատկանիչ է անհատական կարգով հարկելու համար:

§ 18. Յեթե անտեսության գլխավորը, կամ անդամներից մեկը, շնայած վոր իր ժամանակ կանչվել է ցուցակագրության, բայց չի ներկայացել, նրա բացակայությունը չպետք է դադարեցնի աշխատանքները: Այդպիսի դեպքերում, հանձնաժողովները բոլոր հանձնարարները կատարում են իրենց մաս յեղած նյութերի, հավաստի աղբյուրներից ստացած տեղեկությունների հիման վրա:

§ 19. Գյուղհարկային հանձնաժողովը, կազմած և հաստատված ցուցակը պետք է դնի չբավարական և գյուղի ակտիվի ժողովին՝ նորից քննության ասնելու համար:


§ 20. Այս ձևով վերջնականապես կազմված ցուցակը, հաշվառման ավյարների և գյուղհաշվառու հանձնաժողովի կազմած արձանագրությունների հետ միասին, գյուղխորհուրդներն անմիջապես պետք է ուղարկեն շրջանային գործկոմներին: Միաժամանակ գյուղխորհուրդները պարտավոր են հայտնել հարկատուներին հարկային հանձնաժողովի վորոշումը՝ նրանց անհատական կարգով հարկելու մասին:

Յեթե վորեկ գյուղացու կողմից բողոք է ներկայացված անհատական հարկման տակ գցելու գեմ, գյուղհարկային հանձնաժողովը պարտավոր է քննության ստեղծ այդ դիմումը և իր յեղրակացությունը տա գրաստիվ:

Կազմած ցուցակին անպայման պետք է կցվի և ուղարկվի նաև արված բոլորն ու գյուղհարկ հանձնագրովի յեղրակացությունը:

§ 21. Շրջանային հանձնաժողովը պարտավոր է գյուղ

09-Հ2682/1671



12647-52

ցակները ստանալուց հետո, 5 որվա ընթացքում քննել այդ ցուցակի բոլոր տնտեսութունները: Քննութան ժամանակ պետք է անպայման ներկա լինի այն գյուղի հանձնաժողովի նախագահը, վարի ցուցակը քննվում է և ինքը հարկատուն:

§ 22. Երջանային հարկահանձնաժողովները պետք է քննեն բոլոր հատկանիշները, թե արդյոք նրանք համապատասխանում են ՀՍՍՀ Ժողկոմխորհի վորոշմամբ սահմանված հատկանիշներին թե վոչ: Միաժամանակ նրանք պարտավոր են քննել, իսկ հարկավոր դեպքում ստուգելու գյուղհարկային հանձնաժողովի կողմից վոչ-գյուղատնտեսական դրաղմունքներից և գյուղատնտեսութամբ վորոշված գումարները: Նմանապես նրանք պարտավոր են նորից հաշվել նորմատիվ ձևով հաշված գյուղատնտեսական յեկամտի աղբյուրների գումարները, այն դեպքում, յերբ անհրաժեշտ է պարզել պարարում է արդյոք տնտեսությունը գյուղատնտեսությամբ, թե վոչ:

§ 23. Առանց քննության և ստուգման ցուցակները եատատելը միանգամայն արգելվում է:

§ 24. Ցուցակները քննելուց և ստուգելուց հետո, շրջանային հարկային հանձնաժողովը կայացնում է իր վորոշումը և նշանակում արձանագրության մեջ:

§ 25. Յեթե շրջանային հարկ. հանձնաժողովը վորոշում է վորեւ տնտեսություն հանել անհատական կարգով հարկվողների ցուցակից՝ այդ մասին անմիջապես պետք է հայտնի հարկատուին գյուղխորհրդի միջոցով:

§ 26. Երջանային հարկ. հանձնաժողովների վորոշումները վերջնական են:

§ 27. Երջարժեքները պարտավոր են հսկողություն ունենալ գյուղհարկային հանձնաժողովների աշխատանքների վրա, վարպետի վոչ մի աշխատավորական միջակ տնտեսություն անհատական կարգով չհարկվի և վոչ մի կուլակային տնտեսություն անհատական հարկումից դուրս չմնա:

3. ԻՆՉՊԵՍ ՊԵՏԲ Ե ՎՈՐՈՇԵԼ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՀԱՐԿՎՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵՎ ՎՈՉ-ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

§ 28. Գյուղատնտես և շրջանային հարկահանձնաժողովներն անհատական կարգով հարկվող տնտեսությունների գյուղատնտեսական և վոչ-գյուղատնտեսական յեկամունքները պետք է վորոշեն հետևյալ կարգով՝

1) ցուցակագրության ժամանակ պետք է հաշվի առնեն անտեսության բոլոր գյուղատնտեսական յեկամտի աղբյուրները: Դրա համար սահմանված է հաշվառման հատուկ քարտ: Այդ քարտը պետք է լրացնել հետևյալ ձևով՝

2) առաջին յերեսի ընդհանուր մատում պետք է գրել հանրապետության շրջանի և գյուղի անունը, հարկատուի աղբանունը, անունը, հայրանունը և տնտեսության №-ը ըստ գյուղացուցակի: Բացի այդ, պետք է գրել տնտեսության շնչերի ընդհանուր թիվը և դրանց թվում աշխատունակ անդամների քանակը:

3) նույն յերեսի «Ա» պարբերականում պետք է գրել տնտեսության մեջ ամբողջ տարվա ընթացքում

(1930 թ. հունվարի 1-ից մինչև 1930 թ. դեկտեմբերի 30-ը) աշխատած մշտական և սեզոնային բանվորների թիվը՝ հետեվյալ ձևով՝

ա) կետում՝ ժամանակավոր բանվորների թիվը (1930 թ. հունվարի 1-ից մինչև 1930 թ. դեկտեմբերի 30-ը)։

բ) կետում՝ ժամանակավոր բանվորների թիվը (1930 թ. հունվարի մեկից մինչև 1930 թ. դեկտեմբերի 30-ը) և

դ) կետում՝ սեզոնային օրերի թիվը (նույն ժամանակաշրջանի)։

ՈՐԻՆԱԿ՝ մի անասություն վարձել և մեկ մշտական բանվոր և բացի այդ չօրս սեզոնային բանվորներ՝ 10 օրվա ընթացքում։ Այդ անասության համար քաղտի «Ա» պարբերականը պետք է լրացվի հետևյալ կարգով՝

«ա» կետում պետք է գրել «1»։ «բ» կետում պետք է գրել «4»։ Իսկ «գ» կետում՝ «40», ինչպես և 4 բանվորն աշխատելով 10 օրվա ընթացքում ընդամենը աշխատում են 40 սեզոնային օրեր։

4) նույն յերեսի «Բ» պարբերականում պետք է գրել սեզոնային թյուններ այն մասին, զբաղվում է արդյոք անասության վորես անդամ առևտրով, թե վոչ, հետեվյալ ձևով՝

«ա» կետում պետք է գրել առևտրի տեսակը (հաշվի առնելով 1930 թ. հունվարի մեկից մինչև 1930 թ. դեկտեմբերի 30-ը և մինչև այժմ)։

«բ» կետում իրավագրի №-ը (նույն ժամանակամիջոցի համար)։

5) նույն յերեսի «Գ» պարբերականում պետք է

գրել, թե անասությունը վորքան արհեստագործական և յեկամային հարկ և վճարել (30-31 հարկային տարում)։

6) «Գ» պարբերականում պետք է գրել, թե անասությունն ուրիշ ինչ հասկանիչներ ունի անհատական կարգով հարկելու համար։

Որինակ՝ յեթե անասությունը սխտեմատիկարար վարձով և տարիս բարդ գյուղատնտեսական մեքենաներ, կամ ստանում է յեկամուտ վաշխատությունից, կահախօրված շենքերից և այլն։

7) «Ե» պարբերականում պետք է գրել սեզոնային թյուններ այն մասին, թե վարձակալում է արդյոք անասությունը հող՝ հողը ավելի համար սարկացուցիչ պայմաններով։

Ծանոթություն.— Այն դեպքերում, յերբ այդպիսի անասություններ գյուղական ունեն, հատուկ արձանագրության մեջ անպայման պետք է մանրամասնորեն արձանագրել, թե ով և վորվանասության հողն է վարձակալել և ինչ պայմաներով։

8) նույն քարտի յերկրորդ յերեսի վրա, առաջին սյունյակում, 1-ից մինչև 18-րդ համարատարան տղերում, ըստ յրանց վերնադրի, պետք է գրել անասության 1931 թվի բոլոր գյուղատնտեսական յեկամտի աղբյուրները, այսինքն՝ զանազան մշակութիների տարածությունները հեկտարներով և անասունների քանակը՝ գլուխներով։

9) Գյուղատնտեսական յեկամտի աղբյուրները պետք է հաշվի առնել հետեվյալով՝
ա) Փաստացի ցանած ամբողջ հողի տարածությունը (1930 թ. աշնան և 1931 թ. դարնան ցանքը)։

բ) բոլոր տեսակի խտհարքների տարածութիւնը (նույն թիւում հարստներ) .

դ) բանջարանոցի, պարտեզների, խաղողի և պլուզատու այգիների, չալթուսի, բամբակի, կարտոֆիլի, ծխախոտի և մյուս բոլոր մշակութիւնների տարածութիւնները .

դ) փեթակները քանակը (չըջանակաւոր և կթուցածեղ) .

ե) չորս տարեկանից բարձր ձիերը, ջորիները, ուղանքը, յեզները, գոմեշները և եղերը .

դ) ցուլերը՝ յերեք տարեկանից բարձր .

ը) կովերը և մատակները առաջին ծնից հետո և յերկնջները՝ յերեք տարեկանից բարձր .

թ) խոզերը վեց ամսականից բարձր .

ժ) ձմեռն անցկացրած վոչխարները և ալծերը .

Խանութքում. — Անասուններ տարեբը վորոշում և առ մեկն մայիսի 1930 թ. :

10) Նույն յերեսի ծանոթութեան սյունակի 12, 13, 14, 15, 16 և 17-րդ համապատասխան տողերում պետք և գրել, տնտեսութեան այն փոքրահասակ անասունները թիւը, վորին վերաբերում և ալյալ տողը .

Որինակ՝ յենթադրենք տնտեսութեանն ունի յերկու ձի չորս տարեկանից վեր և մեկ ձի յերկու տարեկան : Քարտի 15-րդ տողի առաջին սյունակում պետք և գրել յերկու և նույն տողի ծանոթութեան սյունակում՝ մեկ :

Խանութքում. — Փոքրահասակ անասուններ աւելով պետք և հասկանալ հարկվող տարեբին չհասած բոլոր անասունները, այն և՛ գառները, ուղերը, չորթերը, մողիները, դանաները, զուռները և ալն :

11) Նույն յերեսի (նույն սյունակ) 19-րդ տողում պետք և գրել տնտեսութեան զյուզատնտեսական այնպիսի յեկամտի աղբյուրներից ստացած յեկամտի գումարը, վորոնք հաշվում են ընդհանուր գումարով :

Որինակ՝ արդյունաբերական թոջնարուծութեանից, շերամապահութեանից և ամեն տեսակ փոքրահասակ անասուններից ստացած յեկամուտը : Փոքրահասակ անասունների յեկամուտը պետք և ընդունել այն ամբողջ գումարը, վորը ստացել և տնտեսութեանն այդ անասունները վաճառելուց :

12) 19-րդ տողին վերաբերող բոլոր սյունակները լրացնելիս ամեն մի ճյուղից ստացած յեկամտի գումարը պետք և գրել առանձին-առանձին, զբա համարը պետք և զրել առանձին-առանձին, զբա համարահատկացված «ա», «բ» և «գ» հատուկ կետերի ուղղահասակ յեկամուտը, որինակ՝ յենթադրենք տնտեսութեանը միաթեմայի, որինակ՝ յենթադրենք տնտեսութեանը միաթեմայի յեկամուտ և ստացել և աղբյուրաբերական թոջնարուծութեանից, և շերամապահութեանից և մի քանի տեսակ փոքրահասակ անասուններից :

Այդ յեկամուտները 19-րդ տողի համապատասխան սյունակում պետք և գրել հետեւյալ ձեւով՝

«ա» կետի ընդհանուր մասում պետք և գրել վորեն ճյուղի անվանումը (որինակ՝ «թոջնարուծութեանից»), իսկ համապատասխան սյունակում այդ ճյուղից ստացած ամբողջ յեկամտի գումարը մեկ տարվա ընթացքում :

«բ» կետի ընդհանուր մասում մյուս ճյուղի անվանումը (որինակ՝ «շերամապահութեանից») և նույն կարգով նշանակել այդ ճյուղերից ստացած յեկամտի գումարը և վերջապես՝

«գ» կետի ընդհանուր մասում յերրորդ ճյուղի ան-

վանումը («խորքահատկ անասուններից») և նույն կարգով նշանակել այդ ճյուղից ստացած յեկամտի գումարը:

13) Նույն յերեսի 20-րդ տողի առաջին և յերկրորդ սյունյակները չեն լրացվում:

14) Նույն յերեսի առաջին սյունյակում, 21-րդ տողի «ա», «բ» և «գ» կետերի դիմաց համապատասխանորեն պետք է գրել անտեսութեան բոլոր վոչ-գյուղատնտեսական գրադմունքներից ստացած յեկամուտների գումարները: Ամեն մի տեսակ գրադմունքի մանրամասն անվանումը և նրանցից ստացած յեկամտի գումարն անպայման պետք է գրել առանձին-առանձին:

Ուրինակ՝ անտեսութեանը ստացել և յեկամուտ՝ դարբնոցից, ջրադաշից և ուսուցչի աշխատավարձից: Նման դեպքում «ա» կետի ընդհանուր մասում պետք է գրել «դարբնոցից» և նրա դիմաց առաջին սյունյակում՝ յեկամտի գումարը «բ» կետում՝ «ջրադաշից» և նույն ձևով նույն սյունյակում առանձին յեկամտի գումարը «գ» կետում՝ «ուսուցչի աշխատավարձից» և նույն ձևով, առանձին, նույն սյունյակում՝ յեկամտի գումարը:

15) Վոչ-գյուղատնտեսական գրադմունքների հաշվառման, գրանց համար սահմանված հատուկ ձևով լրացնելու և այդ գրադմունքներից ստացած յեկամուտները վորոշելու կարգը սահմանված է առանձին, վորով և պետք է անշեղ ղեկավարվել:

Այդ մասին տես այս հրահանգի յերկրորդ մասը:

16) Նույն յերեսի 22-րդ տողի առաջին և յերկրորդ սյունյակները չեն լրացվում:

17) Նույն յերեսի 23-րդ տողը լրացվում է հետագայում չըջվին մասում:

18) Նույն յերեսի 2-րդ սյունյակն ամբողջովին լրացնելու մասին տես 34-րդ պարագրաֆը:

19) Նույն յերեսի յերրորդ սյունյակը պետք է լրացվի միայն հարկատուի կողմից արված տեղեկութունները հիման վրա, անկախ նրանից, վոր աստիճանի ճիշտ են այդ տեղեկութունները: Հարկատուի ցուցումների համաձայն, ամեն մի գյուղատնտեսական և ցուցումների համաձայն յեկամտի աղբյուրից ստացած վոչ-գյուղատնտեսական յեկամտի աղբյուրից ստացած յեկամտի գումարը վերարելյալ տեղեկութուններ պետք է գրել համապատասխան տողերում, ըստ նրանց վերնագրերի, առանձին-առանձին, այլ վոչ թե ընդհանուր գումարով:

20) Նույն յերեսի 4-րդ սյունյակը պետք է լրացվի գյուղհարկհանձնաժողովի կողմից վորոշված յեկամտի գումարով: Ամեն մի գյուղատնտեսական և վոչ-գյուղատնտեսական յեկամտի աղբյուրից ստացած յեկամտի գումարը պետք է վորոշվի առանձին և առանձին ել զբվի համապատասխան տողում՝ ըստ նրանց վերնագրերի:

21) Նույն յերեսի 5-րդ սյունյակը պետք է լրացվի չբախտահանների, բախտահանների, կոլտոգնիկները և միջակների ժողովի կողմից վորոշված յեկամտի գումարներով: Ամեն մի գյուղատնտեսական և վոչ-գյուղատնտեսական յեկամտի աղբյուրից ստացած յեկամտի գումարը, նույնպես պետք է վորոշվի առանձին և առանձին ել զբվի համապատասխան տողում՝ ըստ նրանց վերնագրերի:

22) Այդ բոլոր լրացնելուց հետո, կազմած ֆար-

տի համապատասխան մասում ստորագրում են՝ հարկատուն, հանձնաժողովի նախագահը և քարտուղարը, վորը հաստատվում է գյուղխորհրդի կնիքով:

23) Դրանից հետո քարտի բոլոր տվյալները մանրամասնորեն բնկվում են չփավորների, բարակների, կոլխոզնիկների և միջակ ակտիվի ժողովի կողմից և յեթե վոչ մի տարածալուծյուն չկա, ապա ժողովի նախագահը և քարտուղարը ստորագրում են նույն քարտը և հանձնում գյուղխորհրդին: Իսկ յեթե չքա-վորական ժողովը վորեև խնդրում գյուղհաշվառու հանձնաժողովի վորոշման հետ համաձայն չե (որինակ՝ հատկանիշների խնդրում կամ յեկամուտները հաշվելու վերաբերյալ), ապա անհրաժեշտ է կազմել այդ մասին հատուկ արձանագրություն: Նման դեպքերում գյուղ-հաշվառու հանձնաժողովի կազմած քարտը չքալորա-կան ժողովի նախագահը և քարտուղարն այնուամենայ-նիվ ստորագրում են, սակայն քարտի մեջ մատնանը-վում է չքալորական ժողովի կազմած արձանագրու-թյան այն կետը, վորը վերաբերվում է տվյալ տըն-տեսության: Ձքալորական ժողովի կողմից կազմած արձանագրությունն անպայման պետք է կցվի գյուղի կուլակները ջոկելու վերաբերյալ յեղած բոլոր նյութե-րին, վորը գյուղխորհրդի կողմից նույնպես ուղարկ-վում է շրջգործկոմ:

§ 29. Շրջհարկհանձնաժողովները վերոհիշյալ ձե-վով կազմած քարտը ստանալով և 25-րդ §-ի համա-ձայն քննության առնելով այդ, կայացնում է իրենց վո-րոշումը և լրացնում քարտի համապատասխան տողերը և սյունյակները: Այդպիսով քարտի յերկրորդ յերեսի 2-րդ սյունյակը պետք է լրացնի շրջանային հարկային հանձ-

ատողովը, համաձայն իր սրամաղբության տակ յեղած նյութերի:

Որինակ՝ կարող է պատահել, վոր շրջհարկհանձ-նաժողովի կողմից ձեռնարկած ստուգման հետևանքով կամ ուրիշ փաստացի տվյալները հիման վրա պարզվի, վոր տվյալ անտեսությունը թաղցրել է վորոշ չափով իր ցանքի տարածությունը, անասունների թիվը, կամ վոչ-դուղապանտեսական դրադուները: Հիմք ընդունելով այդ մասին կազմած արձանագրությունը կամ համա-պատասխան փաստաթուղթը, շրջ. հարկ. հանձնաժո-ղովը ուղղում է հաշվառման տվյալները նշանակելով այդ քարտի 2-րդ յերեսի 2-րդ սյունյակը և դրանց հի-ման վրա կատարում յեկամուտը վորոշելու նոր հաշիվ-ները:

Նույն յերեսի 6-րդ սյունյակը պետք է լրացվի շրջ-հարկհանձնաժողովի կողմից հաստատված յեկամտի գումարներով: Ամեն մի գյուղատնտեսական և վոչ-գյուղատնտեսական յեկամտի աղբյուրից յեկամտի գումարը պետք է վորոշվի առանձին և առանձին և ղ դրվի համապատասխան տողում ըստ նրանց վերնա-դրերի:

4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵԿԱՍՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ԱՏԱՅԱԾ ՅԵԿԱՍՈՒՏՆԵՐՆ ԱՆՀՍՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՇԱՇՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 30. Գյուղատնտեսական յուրաքանչյուր յեկամտի աղբյուրից ստացած յեկամտան անհատական կարգով վորոշելու համար՝ ընդհանուր յեկամտի կամ ծախսի վերաբերյալ մանրամասն հաշիվներ կատարելու կարիք

չկա: Դրա վոխարեն պետք է հաշվի առնել այն բոլոր տեղական և անտեսական առանձնահատուկ նորաստավոր պայմանները, վորոնք այս կամ այն չափով ազդում են յուրաքանչյուր յեկամտի աղբյուրի նորմաներով հաշված յեկամտի ավելանալու վրա:

§ 31. Բերենք մի քանի սրինակ այն մասին, թե ինչ ձևով պետք է կատարվեն հաշվիները յուրաքանչյուր դյուրատեսական յեկամտի աղբյուրից «անհասական» յեկամուտը վորոշելու համար հիմք ընդունելով վերոհիշյալ սկզբունքները:

Որինակ 1. Առենք թե վորեն դյուրի համար հաստատված է ցանքի յեկամտարեթյան նորման 40 ո.: Դյուրի համար դա սահմանված է վորպես միջին նորմա: Աչքի առաջ ունենալով այդ՝ դյուրհարկ հանձնաժողովը (կամ մի ուրիշ հանձնաժողով) պարզում է՝ թե արվյալ դյուրի կուլակային անտեսության ցանքի միջին բերքը, դյուրի ցանքի միջին բերքից քանի տոկոսով է ավել լինում մոտավորապես ինչ գներով է, ընդհանուր առմամբ, այդ անտեսությանը վաճառում է իր դյուրատեսական միջերգները և ում է վաճառում՝ կոտակերատիվ կամ պետական կադմակերպություններին, թե մասնավոր անձանց, և յերբ է վաճառում: Յեթե նա իրեն դյուրատեսական միջերգները շարունակ վաճառում է գների ամենաբարձր ժամանակ, ուրեմն պետք է ի նկատի ունենալ և այն սղուտը, վոր նա ստանում է այդ ձևով իր միջերգները վաճառելուց: Այդ բոլորը հաշվի առնելով հանձնաժողովը, վորոշում է արվյալ կուլակային անտեսության նորմայով հաշված յեկամտի գումարը, վորոշ տոկոսով ավելացնել:

Յենթադրենք, վոր արվյալ կուլակային անտեսու-

թյան ցանքի բերքը դյուրի միջին բերքից 50 տոկոսով թափելի յե: Բայց այդ անտեսությանը վաճառել է բերքը՝ գներն ավելի բարձր յեղած ժամանակ: Այդ բոլորի հիման վրա, դյուր հաշվառու հանձնաժողովն ավելացնում է այդ անտեսության նորմայով հաշված ցանքի յեկամտի գումարը (50 տոկոսով բերքի բարձր լինելու համար, և 100 տոկոս էլ գների բարձր ժամանակ իր մեթերքները վաճառելու համար: Այդպիսով արվյալ տընթեսության նորմաներով հաշված դաշտամշակության տեսության նորմաներով հաշված գաշտամշակության յեկամտի գումարը ավելացվում է 60 տոկոսով և 40 ո. վոխարեն դատնում է արդեն 100 ուրբի մեկ հեկտարից:

ձիշտ նույն ձևով էլ պետք է հաշվել մյուս բոլոր մշակութիների (խաղողի այգիներ, սրտատու այգիներ, բանջարանոցներ և այլն) յեկամտաները:

Որինակ 2. Յենթադրենք մի ուրիշ դյուրի խոշոր յեղջյուրավոր անասունների (կովերի) յեկամտաբերության նորման հաստատված է 15 ո.: Դյուրի համար դա սահմանված է նախ չափազանց իջեցված չափերով, և վոր չբռնվոր և միջակ անտեսությունները չառեթեն, և սղա դա միջին վորակի կովի վերաբերյալ է վորոշված:

Նկատի ունենալով այդ, դյուրհարկ հանձնաժողովը (կամ մի ուրիշ հանձնաժողով) վորոշում է, թե վոր վր (կամ մի ուրիշ հանձնաժողով) վորոշում է, թե վոր չափով այդ անտեսության կովն ավելի յեկամուտ է տալիս քան դյուրի միջին տեսակի կովը: Դրա համար նա (հանձնաժողովը) հաշվի յե առնում անտեսության կովի տեսակը և վորակը, այսինքն՝ թե ինչ ցեղի կով է, վորքան կաթ է տալիս սրեկան, քանի ամիս է կըթուսում, ինչպիսի սերունդ է տալիս, ինչ պայմաններով է անտեսությանը վաճառում կաթնամթերքները և վեր-

ձայլեա կոմիք պահելու ինչպիսի ողտավեա պայմաններ ունի այդ անտեսութեանը, վորը չունեն մյուս անտեսութեանները: Յենթադրենք, վոր բոլոր այդ պայմանները հաշի առնելով, գյուղհաշիատու հանձնաժողովը գտնում է, վոր տվյալ կոմիք յերեք անգամ ավելի յեկամուտ է տալիս քան միջին կոմիք այդ գյուղում:

Ուրեմն այդ կոմիք ստացած յեկամտի դումարը գյուղհաշիատու հանձնաժողովը պետք է վորոշի յերկու անգամ ավելի քան սահմանված նորման է, այսինքն՝ 15 ո. փոխարեն—45 ո.:

Որինակ 3. Յենթադրենք մի վորեւ գյուղում բանող անասունի (յեղան) նորման հաստատված է 15 ո.: Այդ նորման սահմանված է տվյալ գյուղի միջին տեսակի յեղան համար: Յենթադրենք, վոր տվյալ կուրախի անտեսութեան յեղը լավ ցեղի յե, աշխատունակութեան լավ հասակում, շատ է աշխատում և այլն: Պարզ է, վոր նման պայմաններում այդ յեղից ստացած յեկամուտն ավելի շատ կլինի, քան գյուղի միջին տեսակի յեղից ստացած յեկամուտը: Գյուղհաշիատու հանձնաժողովը, հաշի առնելով այն տարբերութեանը, վոր գոյութեան սննի այդ և միջին տեսակի յեղից ստացվող յեկամուտները միջև, վորոշում է, թե վոր չափով (այսինքն՝ քանի տոկոսով) պետք է ավելացնել տվյալ յեղից ստացվող յեկամտի դումարը: Յենթադրենք, վորոշվել է այդ յեղի նորման ավելացնել 100 տոկոսով, ուրեմն 15 ո. փոխարեն սահմանվում է 30 ուրլի յեկամուտ 1 յեղից:

§ 32. Նույն այդ ձևով պետք է վորոշի մյուս բոլոր տեսակի հարկվող անասուններից ստացված յեկամուտները:

§ 33. Բացի այդ, կուրախի անտեսութեաններում պետք է հաշի առնել նաև այն յեկամուտները, վորոնք ևստացվում են խոշոր և մանր անասունների փոքրահասակներից, այսինքն՝ միջակ և կոլլեկտիվ անտեսութեաններում հարկվող բոլոր անասուններից, ինչպես օրինակ՝ մինչև 4 տարեկան յեղներից, ձիերից, ուղտերից և այլն կամ դեռ ձմեռն չանցկացրած դառններից, ուլերից, խոզերից և այլն:

§ 34. Կուրախի անտեսութեաններում գյուղանտեսութեանից ստացած ամբողջ յեկամտի դումարը պետք է վորոշվի այս տարվա յեկամտի աղբյուրների համեմատ: Գրա համար նրանց յեկամուտները պետք է հաշիել այն յեկամտի աղբյուրներից, վորոնք հաշի յեն առնվում 1931 հարկային տարում, համաձայն այս հրահանգի համարատասխան պարագրաֆների:

Մանրութիւն.— Այն պէպում, յերբ առանց հարկելի պատճառների անտեսութեան այս տարի անցյալ տարվա համեմատութեամբ պակասեցել է իր ցանքի տարածութեանը՝ յեկամուտը հաշիելու համար պետք է վերցնել 1930-31 թ. ցանքը:

§ 35. Ամեն մի մշակութից կամ ամեն տեսակ անասուններից ստացած յեկամուտը վորոշելու համար բոլոր ցուցանիշները (որինակ՝ այս կամ այն մշակութի բերքը մեկ հեկտարից կամ անասունի տված միջերբի չափը—կաթի, յուղի, պանրի, մսի և այլն, գրանց դրները, վաճառելու ձևը, պայմանները և այլն) պետք է վերցնել անցյալ հարկային տարվա ընթացքում գոյութեան ունեցածը:

4. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՀԱՐԿՎՈՂ ՏՆՏԵՍՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՅՈՒՂՀԱՐԿԻ ՈՐԵՆՔՈՎ ՍԱՀ- ՄԱՆՎԱԾ ՎՈՉ ՄԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՉԵՆ ՈԳՏՎՈՒՄ

§ 36. Անհատական կարգով հարկվող անտեսու-
թյունները ընդհանուր յեկամուտը վորոշելիս պետք է
հաշվել նույնպես այն բոլոր յեկամուտները, վորոնք
մյուս անտեսություններում գյուղհարկի յենթակա չեն
և վորոնք հարկվում են միայն անհատական կարգով
հարկվող անտեսություններում, որինակ՝ մեղվաբու-
ծությունից, խոզաբուծությունից, շերամապահությու-
նից, արդյունաբերական թունաբուծությունից, շաքա-
րի ճակնդեղի ցանքերից ինչպես նաև գորգագործու-
թյունից, վորսորդությունից և մյուս տեսակի վոչ-
գյուղատնտեսական դրամուղներից և այլն:

Նմանապես պետք է հաշվել նաև այն յեկամուտնե-
րը, վորոնք ստացվում են գյուղհարկից ազատված բո-
լոր տեսակի աշխատավարձից (որինակ՝ գյուղական
ուսուցիչների, շրջանային բժիշկների, գյուղատնտես-
ների, հողաշափների, պարհակի կարգով կատարած
աշխատանքը և այլն) ինչպես նաև բոլոր տեսակի պարզ
գյուղատնտեսական մեքենաները վարձով ստույգ ստա-
ցած յեկամուտները, որինակ՝ սերմադրիչներից, տե-
սակավորիչներից և այլն:

§ 37. Անհատական կարգով հարկվող անտեսու-
թյունները վոչ-գյուղատնտեսական յեկամուտները վո-
րոշելու համար, պետք է հաշվի առնել և հարկել արն-
տեսության ստացած բոլոր յեկամուտները, անկախ

նրանից յենթակա յեն նրանք գյուղհարկի թե վոչ և
հարկված են նրանք արհեստագործական կամ յեկա-
մասյին հարկով թե վոչ:

Որինակ. մի անտեսություն, բացի գյուղատնտե-
սական յեկամուտներից ունի նաև խանութ, վորը հարկ-
ված է արհեստագործական հարկով և վորից նա ստա-
ցել է 1000 ո. յեկամուտ: Բացի դրանից, նա պարապում
է շերամապահությամբ, վորից ստացել է 500 ո.: Չնա-
յած նրան, վոր անտեսության վոչ-գյուղատնտեսական
յեկամուտներն ընդամենը կազմում են 1500 ո., և
չհարկվող միևիուրեք բարձր լինելու պատճառով
պետք է հարկվի յեկամտահարկով, այնուամենայնիվ
այդ յեկամուտը—յեկամտահարկի յենթակա չէ, վո-
րովհետև անհատական կարգով հարկվող անտեսու-
թյուններում բոլոր յեկամուտները պետք է հարկվեն
գյուղատնտեսական հարկով: Այդպիսով չնայած նրան,
վոր առհասարակ շերամապահությունը գյուղհարկի
յենթակա չէ և չնայած նրան, վոր այդ խանութը հար-
կած է արհեստագործական հարկով և նույնիսկ յենթա-
կա յե յեկամտային հարկի, բայց և այնպես անտեսու-
թյան այդ յեկամուտները պետք է հարկվեն գյուղհար-
կով:

5. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՀԱՐԿՎՈՂ ՏՆՏԵՍՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵԿԱՍՈՒՏՆԵՐԸ ՎՈՐՈՇԵԼՈՒ ՈՐԻՆԱԿ

§ 38. Մի անտեսություն, վոր գտնվում է Յերևանի
շավառի Կոտայքի շրջանի Քանաքեռ գյուղում հարկ-
վում է անհատական կարգով:

Այդ անտեսությունն ունի 4 հեկա. ցանք բոլորը

ցորեն, 1,5 հեկտ. ցանովի խոտ, 1 հեկտ. խաղողի այգի, 0,5 հեկտ. բանջարանոց, 4 կով, 2 յեղ, 15 վոչխար, 8 շրջանակափոր փեթակ և ջրաղաց:

Յենթագրենք, այդ գյուղի յեկամտաբերության նորմաները հաստատված և հետևյալ չափերով՝ ցանքի համար 48 ու., ցանովի խոտի համար 45 ու., խաղողի այգու համար 240 ու., բանջարանոցի համար 100 ու., մեկ գլուխ կովի համար 12 ու., մեկ գլուխ յեղան համար 14 ու., մեկ գլուխ վոչխարի համար 3 ու. և մեկ փեթակի համար 8 ուրլի:

Գյուղհարկ հանձնաժողովը, այդ անտեսության յեկամուտը պետք է վորոշի հետևյալ ձևով՝

1. Առաջին հերթին վորոշում է բոլոր ցանքի յեկամտի գումարը: Այդ գումարը վորոշելու համար, ինչպես փերե սոսցինք, պետք է փերցնել այս տարվա տարածությունը և անցյալ տարվա այդ մշակութի վերաբերյալ ցուցանիչները: Այդպիսով վերցվում է այս տարի ցանած 4 դես. ցորենի տարածությունը և վորոշվում է դրա յեկամուտը: Անցյալ տարի այդ անտեսության ցորենի բերքը, գյուղի միջին ցորենի բերքից, 50 տոկոսով բարձր էր: Այդ նրա պատճառով է, վոր նա պարարտացրել է հողը, ախտահանել և գոել է սերմացուն, չարքացանով և ցանել և այն: Բացի լավ բերքից այդ անտեսությունն իր ավելցուկ ցորենի գլխավոր մասը հենց իր աղացում ալյուր և դարձրել և աղա ծախել է, այն էլ այն ժամանակ, յերբ ալյուրի փութը 15 ու. յեր հասել: Մինչդեռ գյուղի անտեսությունների գլխավոր մասն իր ցորենը ծախել է հացամթերող կազմակերպություններին 2 ու. արժողությամբ: Հաշվի առնելով այդ բոլոր պայմանները, գյուղհարկատու

հանձնաժողովն այդ անտեսության ամեն մեկ յեկամտ ցանքի նորմայով հաշված, յեկամուտը վորոշում է ավելացնել 250 տոկոսով, 50 տոկոսով բերքի և 200 տոկոսով գների բարձր լինելու համար, այսինքն՝ 48 ու. փոխարեն 120 ու.: Այդպիսով 4 հեկտ. ցանքի յեկամուտը 192 ու. փոխարեն վորոշվում է 480 ուրլի:

2. Ցորենի յեկամուտը վորոշելուց հետո, գյուղհարկատու հանձնաժողովը վորոշում է՝

ա) Մարդագործության յեկամուտը: Այդ անտեսության ցանած խոտն արդեն 2-րդ տարին է ինչ բերք է տալիս և ամենալավ տեսակի յոնջա յե ցանված: Այդ պատճառով յոնջան լավն է և բերքը շատ: Այս ուրեմն և գինը թանգ, մանավանդ, վոր բացի այդ նա խոտը պահել է և ծախել և միայն ձմռան վերջին ամիսներին, յերբ գինը 100 տոկոսով բարձրացել էր: Այդ բոլորը նրկատի ունենալով, ցանովի խոտի յեկամուտը վորոշվում է 150 տոկոսով ավելի, այսինքն՝ ամեն հեկտարից 45 ու. փոխարեն 112 ու. 50 կոպեկ, իսկ 1,5 հեկտ. 168 ու. 75 կոպեկ:

բ) Սաղողի այգիների յեկամուտը: Այդ անտեսության խաղողի այգին լավ է մշակված և անցյալ տարի նրա բերքը գյուղի այգիների միջին բերքից շատ ավելի բարձր է յեղել:

Բացի դրանից այդ անտեսությունը վաճառել է վորթել սոսցած խաղողը, այլ խաղողից պատրաստած գինին: Գինին վաճառել է ձմեռը և բավականին թանգ գնով, այսպես, վոր գների տարբերությունը (խաղողի փոխարեն գինի ծախելու հետևանքով) հասնում է մոտ 250 տոկոսի: Այդ նկատառումներով գյուղհարկատու հանձնաժողովը վորոշում է այգու յեկամուտն ավելաց-

նել 300 տոկոսով (50 տոկոս բերքի և 250 տոկոս ել գը-
ների բարձր լինելու համար) : Այդպիսով մեկ հեկտո-
կադողի այգուց ստացած յեկամուտը վերջովում և 240
ո. փոխարեն 720 ո. :

դ) Բանջարաբուծութեան յեկամուտը : Այդ անտե-
սութեան բանջարանոցը նույնպէս ավելի յեկամուտ և
տալիս քան գյուղի մյուս անտեսութեաններէ բանջար-
անոցը գլխավորապէս նրա սրածառով, վոր նա լավ և
մշակում հողը և բացի այդ, բոլոր բանջարեղենը տա-
նում և քաղաք և այնտեղ ավելի թանգ դներով ծախում :
Այդ սրածառով գյուղհաստու հանձնաժողովը վորո-
շում և բանջարանոցի յեկամուտն ավելացնել 250 տոկո-
սով : Այդպիսով բանջարանոցի յեկամուտը 100 ո. փո-
խարեն վորջովում և 350 ո. մեկ հեկտարից, իսկ կես
հեկտարից—175 ո. :

դ) Կովերի յեկամուտը : Կովերի յեկամուտը վո-
րջովում և հետեյալ ձևով. այդ անտեսութեան կովերը
չատ լավ տեսակի յեն : Բացի այդ անտեսութեանը լավ
և խնամում և լավ և կերակրում նրանց : Դրա հետեան-
քով կովերը շատ լավ կաթ են տալիս քան մյուս անտե-
սութեաններինը՝ նույնպէս և լավ տեսակի սերունդ :
Այդ բոլորը նկատի առնելով գյուղհաստու հանձնա-
ժողովն ամեն մի կովի յեկամուտը 12 ո. փոխարեն վո-
րջում և 42 ո., իսկ բոլորից 48 ո. փոխարեն 168 ո. :
Այլեւացում 250 տոկոսով :

ե) Յեղների յեկամուտը : Այդ անտեսութեան յեղ-
ները նմանապէս շատ լավ տեսակի, առողջ և ուժեղ են :
Բացի այդ նրանք աշխատում են վոչ թե միայն գյու-
ղատնտեսութեան մեջ, այլ և նրա ջրադրոցի համար :
Հաշիի առնելով այդ բոլորը, գյուղհաստու հանձնա-

ժողովն ամեն մի յեղի յեկամուտը 14 ո. փոխարեն վո-
րջում և 35 ո., իսկ յերկուսից 56 ո., այսինքն՝ ավե-
լացում նույնպէս 150 տոկոսով :

դ) Վոչխարների և այծերի յեկամուտը : Վոչխար-
ներից և այծերից ստացած յեկամուտը վորջովում և
հետեյալ կարգով. այդ անտեսութեան վոչխարները
«մաղես» ցեղից են : Այդ սրածառով և կաթն և շատ
ստացվում, և բուրգը, և սերունդն և լավ լինում ու-
թանդ ծախում : Այդ նկատառումներով գյուղհաստու
հանձնաժողովն ամեն մեկ գլխի յեկամուտը 2 ո.
50 կ. փոխարեն վորջում և 8 սուրբի, իսկ բոլորից 120
սուրբի : Այլեւացում մոտ 200 տոկոսով :

ը) Մեղվաբուծութեան յեկամուտը : Ինչ վերաբեր-
վում և մեղվաբուծութեան յեկամուտն՝ գյուղհաստու
հանձնաժողովը քննելուց հետո պարզեց, վոր այդ արն-
տեսութեան ամեն մեկ փեթակից ստացած յեկամուտը
նույնքան և ինչքան վոր մյուս անտեսութեաններէ մեջ,
այդ սրածառով էլ ամեն մի փեթակից ստացած յեկա-
մուտը վորջում և 8 սուրբի, իսկ մեղվաբուծութեանից
ստացած ամբողջ յեկամուտը 64 սուրբի :

Բոլոր գյուղատնտեսական յեկամուտի աղբյուրներից
ստացած յեկամուտը պետք և հաշվել մատնանշված ձե-
վով : Այդ յեկամուտի վրա պետք և ավելացնել անտեսու-
թեան վոչ-գյուղատնտեսական գրադմունքներից ստա-
ցած յեկամուտը և ստացված ամբողջ դումարից հաշվել
հարկը :

§ 39. Գյուղատնտեսական գրադմունքներից ստա-
ցած յեկամուտները վորջելու ժամանակ պետք և նկա-
տի ունենալ՝

1) վոր վոչ մի դեպքում չի կարելի ավելացնել

անտեսութեան յեկամուտը յեթե իրականում գոյութեան չունեն այնպիսի ցուցանիշներ, վորոնք իրապես ազդում են անտեսութեան յեկամտի ավելանալու վրա և,

2) վոչ մի դեպքում անհատական կարգով հարկվող անտեսութեանները իրական «անհատական» յեկամուտները նորմաներով հաշված յեկամտի դումարից պակաս չեն կարող լինել:

§ 40. Եկամտի ունենալով, վոր անհատական կարգով հարկվող անտեսութեանները գյուղատնտեսական գրադմունքներից ստացած յեկամուտները հաշվելու ձևը թե գյուղի և թե չրջանի աշխատակիցներին այնքան էլ ծանոթ չի և վոր այդ պատճառով հնարավոր և գանազան կողմա սխալներ, չրջանային գործկոմները պետք և խիստ հեռու են, վոր այդ ստորերկրում վոչ մի աղսվազում չլինի:

§ 41. Շրջանային գործկոմների ու գյուղխորհուրդների հատուկ ուշադրութեան և հրաւիրվում այն խնդրի վրա, վոր վոչ մի միջակ աշխատավորական անտեսութեան չընկնի անհատական կարգով հարկվող կուլակային անտեսութեանները չարքը և չզրկվի այն արտոնութեաններից, վորոնք արվում են միջակ աշխատավոր գյուղացեթյանը և վոչ մի կուլակային անտեսութ. անհատական կարգով հարկվելուց դուրս չմնա, հակոտակ դեպքում մեղավորները կյենթարկվեն խիստ պատասխանատուութեան:

ՀՍՍՀ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱՐԱՆ
ՀԵՐԵՎՈՂԿՈՄՍՏԻՆԻ
ՔՈՅՆԵՐԻ ԵՐԿՐՈՎՍՈՒՆ ՍԵԿՏՈՐ
Ս. Ա. ՄԵՍՆԻԿՈՎ
Ս. Ա. ՄԵՍՆԻԿՈՎ

800

« Ազգային գրադարան



NL0176000

27689